# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՍ ՊԻ ԷՍ ԳՐՈՒՊ-ն ԳՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | GMM (General Medical Merate) կամ Villa Sistemi Medicali կամ Italray կամ EcoTron կամ DK Medical Systems կամ Medical Technologies կամ Hanmed | Calypso կամ Opera կամ Moviplan iC DR / Armonicus 2.0 կամ X-Frame DR կամ Innovision DXII կամ AccuRay կամ Kinetrac-KNX7000 կամ ExtenTrac | Calypso կամ Opera կամ Moviplan iC DR / Armonicus 2.0 կամ X-Frame DR կամ Innovision DXII կամ AccuRay կամ Kinetrac-KNX7000 կամ ExtenTrac | GMM (General Medical Merate) կամ Villa Sistemi Medicali կամ Italray կամ EcoTron կամ DK Medical Systems կամ Medical Technologies կամ Hanmed | Ստացիոնար ռենտգեն համալիրը պետք է ապահովի թվային ռենտգենոգրաֆիա, լայն կիրառություն ունեցող ռենտգենոգրաֆիկ հետազոտությունների իրականացումը: Բարձր հաճախականության ռենտգենյան սնող միավորը պետք է ապահովի առնվազն 640 մԱ անոդային հոսանք և ունենա բարձր լարման տիրույթ, ոչ պակաս, քան՝ 40–150 կՎ: Ճառագայթիչը պետք է տեղակայված լինի հատակի վրա երկայնական ուղղությամբ առնվազն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 200 սմ, լայնական ուղղությամբ առնվազն 20 սմ և ուղղահայաց ուղղությամբ առնվազն 150 սմ ազատորեն տեղաշարժվող կայանի վրա և ունենա շրջումների և ընտրված դիրքում սևեռվելու հնարավորություն բոլոր տեսակի ռենտգենոգրաֆիաներ իրականացնելու համար: Կիզակետային հեռավորությունը պետք է լինի կարգավորվող առնվազն 40–180 սմ տիրույթում: Ռենտգենյան խողովակը պետք է ունենա երկու կիզակետ, չափերը՝ ոչ ավել, քան 0.6 մմ փոքր կիզակետի և ոչ պակաս, քան 1.2 մմ մեծ կիզակետի համար, ռենտգենյան խողովակի պտտման անկյունը՝ առնվազն ±135°, անոդը՝ պտտվող, ջերմունակությունը՝ ոչ պակաս, քան 300,000 HU: Կոլիմատորը պետք է ապահովի առնվազն 150 կՎ-ին համապատասխան ճառագայթների հուսալի կոլիմացիան և ապահովի նկարահանվող դաշտի լուսադիոդային կարգավորվող ցուցանշում՝ առնվազն 160 Լյուքս լուսավորմամբ: Ճառագայթիչի պատուհանի և կոլիմատորի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գումարային զտումը պետք է համարժեք լինի առնվազն 2.0 մմ Al-ի: Այլ զտիչներ տեղակայելը պետք է հնարավոր լինի: Նկարահանման հորիզոնական սեղանի դեկան պետք է ապահովի ռենտգենանկարահանում առանց սեղանի վրա հետազոտվողի լրացուցիչ դիրքավորման: Սեղանի դեկայի շարժումները՝ առնվազն չորս ուղղություններով: Դեկայի երկայնական տեղաշարժը՝ առնվազն 100 սմ, լայնական տեղաշարժը՝ առնվազն 25 սմ: Դեկայի արտաքին չափերն առնվազն՝ Ե/200 × L/80 սմ, սեղանի վրա պացիենտի տարողունակությունը՝ ոչ պակաս, քան 300 կգ: Նկարահանման ուղղահայաց կայանը պետք է ապահովի առնվազն 180 սմ հեռավորություն ճառագայթիչից, նկարահանման ուղղահայաց կայանի ուղղահայաց տեղաշարժը՝ առնվազն 120 սմ: Օպերատորի կոնսոլը պետք է ապահովի նկարահանման ռեժիմների ընտրություն՝ ավտոմատ էքսպոզիցիայի /ընտրովի/, 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կետերով /կՎ+մԱվ/, 3 կետերով /կՎ+մԱ+վրկ./ գործընթացներով: Սնուցման աղբյուրի հզորությունը՝ ոչ պակաս, քան 52 կՎտ: Սնուցման աղբյուրի տեսակը՝ կուտակային կամ համարժեք պաշտպանվածության։ Անլար հարթ պանելային դետեկտորի առկայություն՝ առնվազն 43×43 սմ ակտիվ աշխատանքային մակերեսով, CsI (ցեզիումի յոդիդ) սցինտիլյատորով և ամորֆ սիլիցիումի սենսորային տեխնոլոգիայով։ Դետեկտորի կառուցվածքը պետք է ապահովի սցինտիլյատորում առաջացած օպտիկական ազդանշանի հնարավորինս անմիջական փոխանցումը ֆոտոդիոդային սենսորային շերտին՝ նվազեցնելով լույսի տարածման և ցրման հետևանքով առաջացող ազդանշանի կորուստները և ապահովելով բարձր զգայունություն, բարձր կոնտրաստ և պատկերի հստակություն նաև ցածր ճառագայթային դոզաների դեպքում։ Պիքսելի չափը՝ առավելագույնը 150 մկմ, պատկերի մատրիցը՝ առնվազն |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

S P S GROUP в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | 2830×2830 պիքսել, անալոգաթվային փոխակերպումը՝ առնվազն 16 բիթ: MTF ցուցանիշը պետք է լինի ոչ պակաս, քան՝ 90%՝ 0.5 lp/mm տարածական հաճախականության դեպքում, 73%՝ 1.0 lp/mm դեպքում, 48%՝ 1.5 lp/mm դեպքում, 36%՝ 2.0 lp/mm դեպքում, 25%՝ 2.5 lp/mm դեպքում և 18%՝ 3.0 lp/mm դեպքում: DQE ցուցանիշը՝ 2.2 µGy ճառագայթման դոզայի պայմաններում, պետք է լինի ոչ պակաս, քան՝ 78%՝ 0 lp/mm տարածական հաճախականության դեպքում, 68%՝ 0.5 lp/mm դեպքում, 59%՝ 1.0 lp/mm դեպքում, 49%՝ 1.5 lp/mm դեպքում, 42%՝ 2.0 lp/mm դեպքում, 32%՝ 2.5 lp/mm դեպքում և 23%՝ 3.0 lp/mm դեպքում: Աղմուկին համարժեք դոզան (Noise Equivalent Dose)՝ առավելագույնը 250 nGy: Դետեկտորի պաշտպանվածությունը հեղուկների ներթափանցումից՝ առնվազն IPX4: Դետեկտորը պետք է դիմանա առնվազն 150 կգ հավասարաչափ բաշխված մակերեսային բեռնվածության և առնվազն 100 կգ կետային բեռնվածության: Դետեկտորի քաշը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մարտկոցով՝ առավելագույնը 4.0 կգ: Դետեկտորը պետք է ունենա ավտոմատ ճառագայթման հայտնաբերման՝ AED (Auto Exposure Detection) հնարավորություն: Պատկերի նախնական ցուցադրման ժամանակը՝ առավելագույնը 3 վայրկյան: Անլար հարթ պանելային դետեկտորի մարտկոցների լիցքավորման աղբյուրի առկայություն: Դետեկտորը պետք է մատակարարվի առնվազն 2 վերալիցքավորվող մարտկոցով և դրանց լիցքավորման սարքով: Լաբորանտի թվային ռենտգենոգրաֆիայի համար աշխատատեղը պետք է հանդիսանա որպես միավորված ռենտգենյան պատկերների կառավարման աշխատանքային կայան, որը հնարավորություն պետք է ապահովի հեշտությամբ և արագ նույնականացնել հետազոտվողին, ստանալ, համապատասխան մշակումներ իրականացնել և արխիվացնել պատկերը: Պատկերի օպտիմալ տեսքով ստացման համար բավական պետք է լինի նշել հետազոտվողի տվյալները և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հետազոտման էքսպոզիցիայի տվյալները: Տվյալների բազայի ունակությունը պետք է լինի ոչ պակաս, քան 200000 պատկեր: Տվյալների բազան պետք է լինի պաշտպանված: Պատկերների հետ աշխատելու ժամանակ պետք է հնարավոր լինի՝ մեծացնել ընթացիկ պատկերը, միաժամանակ ներկայացնել պատկեր արխիվից, կատարել տարածական և անկյունների չափումներ, ներմուծել գրառումներ, գրաֆիկական սիմվոլներ և էլեկտրոնային նշաններ: Էլեկտրասնուցումը՝ 380-400 Վ, 50-60Հց եռաֆազ փոփոխական հոսանքի ցանցից: Գինը պետք է ներառի՝ մատակարարում, գնորդի կողմից նշված վայրում տեղադրում, կարգաբերում, օպերատորական ուսուցում: Երաշխիք՝ առնվազն 24 ամիս: Սարքը պետք է արտադրված լինի ոչ ուշ, քան մատակարարումից առաջ 12 ամսվա ընթացքում: Տեղադրումը և երաշխիքային սպասարկումը՝ սերտիֆիկացված մասնագետի կողմից: Համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սերտիֆիկատների առկայություն՝ CE կամ FDA սերտիֆիկատ։ Լրացուցիչ պահանջներ։ Առաքումը, տեղադրումը՝ մատակարարի միջոցներով և հաշվին։ Մատակարարման ժամկետ՝ 60 օր։ |